ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊՈԱԿ

ՀՐԱՄԱՆ

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 Հունվար, 2023 N 02-Լ

Ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի հունիսի 30-ի N 47-Լ հրամանով հաստատված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կանոնադրության (նոր խմբագրությամբ) 25-րդ կետի «ե» և «ժա» ենթակետերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի N 08-Լ հրամանով հաստատված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրության փոփոխության 34-րդ կետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված դրույթներով և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2021 թվականի փետրվարի 16-ի N 4-Ա հրամանով հաստատված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատողների լրավճարների և պարգևատրումների վճարների կազմավորման և տրման կարգով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում մատուցված վճարովի ծառայությունների դիմաց գանձվող վճարներից կազմակերպության աշխատողներին տրվող 2023 թվականի լրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը՝ համաձայն Հավելված N 1-ի:
2. Աշխատողներին լրավճարները կարող են տրվել ամսական, իսկ պարգևատրումները, եռամսյակային պարբերականությամբ, որոնք 2023 թվականի վճարման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կազմավորվում և տրվում են տնօրենի համապատասխան հրամանով՝ ապահովելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2021 թվականի փետրվարի 16-ի N 4-Ա հրամանով հաստատված կարգի 4-րդ կետում սահմանված դրույթների պահպանումը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով ծանուցել կազմակերպության աշխատողներին:

16.01.2023

X

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Տնօրեն՝ Signed by: MOVSISYAN HARUTYUN 2910840360 Հ. Մովսիսյան

ք. Երևան

Լ. Խառատյան

Հավելված N 1
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենի
2023 թվականի հունվարի 16-ի N 02-Լ հրամանի

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում մատուցված վճարովի ծառայությունների դիմաց գանձվող վճարներից կազմակերպության աշխատողներին տրվող 2023 թվականի լրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը

ՀՀ դրամ

հ/հ	պաշտոնի անվանում	հաստիքային միավոր	լրավճար (ամսական)	
			նվազագույն	առավելագույն
1	2	3	4	5
1	Տնօրեն	1.0	60,000	175,000
2	Տնօրենի տեղակալ	1.0	30,000	125,000
3	Գլխավոր հաշվապահ	1.0	30,000	110,000
4	Տնօրենի օգնական - ՄՌԿ և գնումների մասնագետ	1.0	20,000	70,000
5	Տեխնիկական աշխատող - օժանդակ բանվոր	0.5	-	-
6	Հավաքարար	0.5	-	-
Հաշվառման և օգտակար հանածոների պետական կադաստրի բաժին (ՀՕՀՊԿ)				
7	Բաժնի պետ	1.0	30,000	110,000
8	Գլխավոր մասնագետ	1.0	25,000	75,000
9	Գլխավոր մասնագետ	1.0	25,000	75,000
10	Առաջատար մասնագետ (ֆոնդապահ)	1.0	20,000	70,000
11	Առաջատար մասնագետ	0.5	10,000	30,000
Ընդամենը՝ ամսական		**9.5**	**250,000**	**840,000**
Ընդամենը՝ տարեկան		**11 աշխատող**	**3,000,000**	**10,080,000**

Գլխավոր հաշվապահ՝ Գ. Ավագյան

ՄՌԿ մասնագետ՝ Լ. Խառատյան